

Հաստատում եմ՝  
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,  
սոցիոլոգիայի և իրավունքի  
ինստիտուտի տնօրեն,  
իրավաբանական գիտությունների թեկնածու  
Լ.Ա. Ղազանչյան



**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ**

**ԱԴԵԼԻՆԱ ԱՐՄԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ**

«ԳՈՐԾՈՒՆ ԶՂՋԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ  
ԱԶԱՏԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)»  
թեմայով

ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական  
իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման համար ներկայացված  
ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող թեկնածուական ատենախոսությունը նվիրված է գործուն գղջալու  
ինստիտուտի արդի վիճակի և զարգացման հեռանկարների ուսումնասիրությանը:

Ատենախոսը փորձ է կատարել մշակել գիտական այնպիսի աշխատանք, որը  
ըստ էության կհանդիսանա ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ  
հանրապետությունում առաջին համապարփակ հետազոտությունը:

Հայցորդի ատենախոսության ուսումնասիրության առարկա են կազմում  
գործուն գղջալու մասին ընդհանուր և հատուկ նորմերի վերաբերյալ հայրենական  
իրավունքում առկա հիմնախնդիրները, դրանց օրենսդրական կանոնակարգման  
թերություններն ու բացերը, արտասահմանյան իրավական կարգավորումների

ուսումնասիրությունը և հայրենական քրեական իրավունքում գործուն գղջալու ինստիտուտի զարգացմանն ուղղված առաջարկների վերծանումը և համապատասխան հետանկարների ուսումնասիրությունը:

Ընտրված թեմայի արդիականությունը առաջին հերթին կայանում է նրանում, որ ներկայումս Հայաստանի Հանրապետության քրեական քաղաքականությունը ենթադրում է պատասխանատվության այլընտրանքային միջոցների առկայություն, որոնց թվում կարևոր տեղ է զբաղեցնում գործուն գղջալու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելը: Հարկ է նշել, որ քրեական օրենսդրությամբ հետապնդվող նպատակներին ու խնդիրներին միշտ չէ, որ հնարավոր է հասնել քրեաիրավական ազդեցության առավել ռեպրեսիվ միջոցների կիրառմամբ: Քրեական իրավունքի մարդասիրության, հետհանցավոր դրական գործողությունների խթանման միտումն է պայմանավորում պետության կողմից խրախուսման իրավական ձևերի առավել արդյունավետ օգտագործումը: Գործուն գղջալու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի ներդրումը բազմաթիվ տեսական և գործնական խնդիրներ է առաջացրել, որոնք խոչընդոտում են դրա արդյունավետ կիրառմանը և, չնայած կատարված բազմաթիվ փորձերին, մնում են չլուծված: Այսպես, նշվում է իրավակիրառ պրակտիկայում գործուն գղջալու ինստիտուտի սահմանափակ կիրառումը՝ հաշվի առնելով դրա օրենսդրական կառուցվածքի անկատարությունը, միատեսակ մեկնաբանության բացակայությունը, քրեական պատասխանատվությունից ազատելու հատուկ տեսակների չհամաձայնեցվածությունը :

Կատարված ուսումնասիրության հիման վրա հեղինակը վերլուծել և ներկայացրել է գործուն գղջալու ինստիտուտի սոցիալ-իրավական էության իր տեսլականը, մի շարք օրենսդրական բացեր ու հակասություններ, ձևակերպել դրանց հաղթահարմանն ու կատարելագործմանն ուղղված նոր մոտեցումներ ու առաջարկություններ: Մասնավորապես, քրեական իրավունքի դոկտրինում ձևի և բովանդակության ներդաշնակեցման նպատակով հեղինակն առաջարկում է "գործուն գղջալ" տերմինի փոխարեն օգտագործել "անձի կողմից կատարված հանցագործության մասին գործուն հաղորդում" տերմինը, քանի որ գղջումը հանդիսանում է մեղավոր անձի բարոյահոգեբանական բնութագիրը, վերաբերում է բարոյահոգեբանական այն կատեգորիային, որը դժվար է հաստատել

գործնականում: Ասվածը վկայում է գործուն գղջալու ինստիտուտի տեսագործական խորը ուսումնասիրության և նրա սոցիալ-իրավական էության որակապես նոր ներկայացման մասին: Գործուն գղջալու ինստիտուտի ընդլայնման մասին հեղինակի գաղափարի շրջանակներում ուշադրության է արժանի տնտեսության ոլորտում կատարված հանցագործության մասին գործուն հաղորդման մասին հատուկ նորմի նախատեսման առաջարկը՝ հանցագործությամբ պատճառված վնասի պարտադիր փոխհատուցմամբ:

Ատենախոսության արդիականությունը, տեսական և կիրառական նշանակությունը պայմանավորված են ընտրված թեմայի գիտական մշակվածության աստիճանով: Այս առումով պետք է նկատել, որ հայրենական իրավագիտության շրջանակում գործուն գղջալու ինստիտուտը, առկա տեսական և գործնական հիմնախնդիրները, ինչպես նաև միջազգային իրավական զարգացման հիմնական միտումները նախկինում առանձին ուսումնասիրության առարկա չեն եղել և համակողմանի վերլուծության չեն ենթարկվել: Համապատասխանաբար, հայրենական իրավաբանական գրականության մեջ բացակայում է վերոնշյալ ինստիտուտի խորը և առանձին գիտական ուսումնասիրություն և վերլուծություն, մինչդեռ իրավակիրառ պրակտիկայում առաջացած հիմնահարցերը, ինչպես նաև գործուն գղջալու ինստիտուտի ոչ միատեսակ ընկալումները օբյեկտիվորեն վկայում են նման հետազոտության պահանջի առկայության մասին:

Քննարկվող ատենախոսությունում հեղինակը պատշաճ գիտական խորությամբ ուսումնասիրության է ենթարկել վերաբերելի տեսական գրականությունը, հայրենական և արտասահմանյան երկրների օրենսդրությունը և դատական պրակտիկան:

Գրախոսվող աշխատանքը բաղկացած է երեք գլխից, որոնք ներառում են յոթ պարագրաֆ, հեղինակը մանրամասնորեն վերլուծում է վերոնշյալ և այլ հարցերը՝ առաջարկելով հնարավորին համապարփակ լուծումներ, այդ թվում նոր օրենսդրական փոփոխությունների առաջարկներ և իրավակիրառ պրակտիկայում առաջացած հարցերի լուծման եղանակներ:

Այսպիսով, ընտրված թեմայի արդիականությունը, գործուն գղջալու ինստիտուտի առավել արդյունավետ կիրառմանն ուղղված առաջարկությունները,

ինչպես նաև հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը կասկած չեն հարուցում:

Գրախոսվող աշխատանքի գիտական նորույթն առաջին հերթին նրանում է, որ աշխատանքը գործուն գղջալու ինստիտուտի խորը ուսումնասիրության առաջին գիտական փորձն է Հայաստանի Հանրապետությունում: Հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ բազմակողմանի և ամբողջական վերլուծության է ենթարկվել գործուն գղջալու ինստիտուտը՝ դրա օրենսդրական ամրագրման պահից մինչև արդի ժամանակաշրջան, ինչպես նաև ներկայացվել են դրա զարգացման հիմնական հեռանկարները: ՀՀ և ՌԴ գործող քրեական օրենսգրքերի, ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծի, մի շարք արտասահմանյան պետությունների քրեական օրենսդրության և առկա տեսական մշակումների իրավահամեմատական վերլուծության հիման վրա աստենախոսի կողմից փորձ է արվել համալիր և համակողմանի հետազոտել գործուն գղջալու մասին ընդհանուր և հատուկ նորմերի կիրառման կապակցությամբ ծագող հիմնահարցերը: Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձնում այն պայմանների ամբողջության ուսումնասիրությանը, որոնք բավարար են անձին քրեական պատասխանատվությունից ազատելու մասին որոշում կայացնելու համար՝ նշելով, որ գործուն գղջալու բոլոր պայմանների կատարման պահանջը նեղացնում է ուսումնասիրվող ինստիտուտի կիրառման ոլորտը:

Գիտական նորույթ են պարունակում նաև պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները: Դրանց մեծամասնությունը արժանի է առանձնակի ուշադրության: Այսպես, հեղինակը առաջարկում է որպես քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր պայման դիտարկել մեղքի ընդունումը և առաջարկում է նրա օրենսդրական սահմանումը և տարանջատումը գղջալուց: Հեղինակը նշում է, որ իրավակիրառ մարմինների համար նշանակություն ունի միայն մեղքի ընդունումը, մինչդեռ գղջումը ներքին, հոգեբանական բնութագիր է, իրենից ներկայացնում է հանցագործություն կատարած անձի դրական հետհանցավոր վարքագծի ոչ պարտադիր բաղադրիչ և այդպիսով չի ազդում նրա վարքագծում գործուն գղջալու հատկանիշների առկայության և քրեական պատասխանատվությունից ազատելու որոշման վրա:

Հաշվի առնելով զինծառայողների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները, այնպիսի փակ հաստատության առանձնահատկությունները, արդարության սկզբունքի իրագործման անհրաժեշտությունը, հեղինակն առաջարկում է առավել արտոնյալ պայմաններ ամրագրել զինծառայողի նկատմամբ գործուն գղջալու ինստիտուտը կիրառելիս:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ սույն աշխատանքը, հանդիսանալով գործուն գղջալու ինստիտուտի քրեաիրավական ամփոփ ուսումնասիրություն՝ համակարգում և խորացնում է տվյալ ինստիտուտի վերաբերյալ առկա տեսական պատկերացումները: Բացի այդ, սույն ուսումնասիրությունը կարող է օգտագործվել ուսումնական գործընթացում քրեական իրավունքի և քրեաբանության դասախոսությունների դասընթացների մշակման ժամանակ:

Բացի այդ, ստենախոսության հետազոտության մեջ մշակված առաջարկությունները կարող են օգտագործվել իրավակիրառ պրակտիկայում և հաշվի առնվել քրեական օրենսդրությունը կատարելագործելիս:

Ստենախոսության սեղմագիրը արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված զիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի հրատարակված ինը հոդվածները լիովին արտացոլում են ստենախոսության հիմնական արդյունքները:

Վերոնշյալի հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ աշխատանքը գերծ չէ որոշակի Բացթողումներից և անհատակություններից, որոնք հանգում են հետևյալին.

1. Պաշտպանության ներկայացվող դրույթներից մեկում հեղինակն առաջարկում է օրենսդրորեն ամրագրել գործուն գղջալու դեպքում քրեական պատասխանատվությունից պայմանական ազատելու հնարավորությունը. Այսպես, հեղինակը նշում է, որ «...Պայմանական բնույթ հաղորդելն առաջարկվում է նաև անձի կողմից կատարված հանցագործության մասին գործուն հաղորդման մասին ընդհանուր նորմին՝ միայն սահմանափակմամբ, որ այն կթողնվի իրավակիրառ մարմինների հայեցողությանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ հաշվի առնելով գործի հանգամանքները»: Առաջարկվող օրենսդրական նորամուծությունն, անշուշտ արժանի է ուշադրության, սակայն, վիճելի է, և մեր

կարծիքով լրացուցիչ հիմնավորման կարիք ունի այն, թե ինչ հանգամանքներով պետք է առաջնորդվել քրեական պատասխանատվությունից պայմանական ազատման մասին որոշում ընդունելիս: Քննարկվող դրույթի միատեսակ մեկնաբանման և կիրառման նպատակով առաջարկում ենք հստակ ամրագրել այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելը կրելու է պայմանական բնույթ:

2. Հեղինակը նշում է, որ “նշված բոլոր պայմանների միաժամանակյա առկայության դեպքում հանցանք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից”: Ատենախոսության բովանդակությունից և պաշտպանությանն ներկայացվող դրույթներից ակնհայտ է դառնում, որ ատենախոսը գործուն գղջալու մասին քրեախրավական նորմում թվարկված բոլոր պայմանների ոչ պարտադիր առկայության կողմնակից է: Այդ կապակցությամբ հարց է առաջանում, թե ինչ է ընկած հեղինակի առաջ քաշած այն դրույթի հիմքում, համաձայն որի բոլոր պայմանների առկայության դեպքում անձը իմպերատիվ կերպով ազատվում է քրեական պատասխանատվությունից:

3. Պաշտպանության ներկայացվող երկրորդ դրույթը, որով առաջարկվում է զինծառայողների գործուն գղջալու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու օրենսդրական կարգավորումը, մեր կարծիքով բավարար չափով հիմնավորված չէ:

4. Հեղինակը հաճախ կրկնում է հղումներում արդեն իսկ նշված աշխատությունների բոլոր տվյալները (221, 303, 316, 152, 154, 180, 181, 196), մինչդեռ ավելի նպատակահարմար է օգտագործել «Там же», «Указанное сочинение» և այլն:

Պետք է նշել, որ մատնաշված նկատառումներն ունեն մասնակի և խորհրդատվական բնույթ և չեն կարող ազդել աշխատանքի ընդհանուր դրական գնահատականի և արժանիքների վրա:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ հեղինակի կողմից հրատարակված ինը գիտական հոդվածներում լիարժեքորեն արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Հետևաբար, Ադելինա Արմենի Մարգարյանի «Գործուն գղջալու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնախնդիրները (իրավահամեմատական վերլուծություն)» վերտառությամբ ատենախոսությունը իրենից ներկայացնում է գործուն գղջալու ինստիտուտի հիմնախնդիրներին վերաբերող արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն ուսումնասիրություն:

Վերոնշյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ Ադելինա Արմենի Մարգարյանի «Գործուն գղջալու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնախնդիրները (իրավահամեմատական վերլուծություն)» վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման Կանոնակարգով սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի՝ 2020 թվականի նոյեմբերի 13-ի նիստում, որին մասնակցել են իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ. Ստեփանյանը, գլխավոր գիտաշխատող, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Հ. Սաֆարյանը, ավագ գիտաշխատող, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա.Վ. Շուքուրյանը, Ա.Ա. Աբրահամյանը, Բ.Վ. Ղազինյանը, Լ.Ա. Ղազանյանը:

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտի պետաիրավական  
հետազոտությունների բաժնի վարիչ,  
իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր



Հ.Մ. Ստեփանյան